№ 7 VI ՏԱՐԻ 30 ԱՊՐԻԼ 1897

"Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse :
Rédaction du "Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ՇԷԿՕ

Հ. Յ. Դաշնակցութեան „Վրէժ" կենդրոնական կոմիտէն իր խորին ցաւն է յայտնում իր ընկերակից **ՇԷԿՕԻ** վրայ կատարուած ոճիրի մասին։

Պաշտօնապէս յայտարարւում է, որ այդ գազանային սպանութիւնը համարւում ոճրագործութիւն՝ դրդուած մնձնական ատելութիւնից. Շէկօն յեղափոխական գործի դէմ ոչ մի յանցանք չէր գործած։

Ոճրագործները անյայտացել են։

Մեր դժբաղդ ընկերոջ յեղափոխական գործունէութեան մասին կը գրենք մօտիկ ապագայում։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ „ՎՐԷԺ"
ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷ.

ՅՈՅՆ-ՏԱՃԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Կատարուեց։ Զեռնոցը նետուեցաւ, և հազարաւոր լէգիօնները տարբերային հոսանքի նման մղուեցին դէպի ահաւոր մենամարտութեան կրկէսը։ Կատարուեց այն, ինչ որ սպասւում էր, այն, ինչ որ վաղուց ճակատագրական էր դարձել։ Զօգնեցին Յունաստանին տասնեակ տարիների նրա խաղաղ ջանքերը, չօգնեցին նրան իր անվերջ յորդորներն ու սպառնալիքները։ Դիպլօմատիայի քար ու ապառաժ սիրտը անզգայ մնաց . . . Ի՞նչ էր մնում անել։ Մի վեհ նպատակ էր դրուած նրա առաջ. արիւնակից եղբայրների ստրկական շղթաները վաղուց էր օգնութիւն էին գոչում, վաղուց է Մայր-Հայրենիքը փայփայում էր նրանց վերջնական ազատութեան գաղափարը։ Ազատել այդ ստրուկ եղբայրներին, թէկուզ լինի դա ամենածանր զոհողութիւնների գնով . . . Այո՛, արդէն լցուել էր բաժակը, Յունաստանը չտատանուեց և առաջ սլացաւ։ Երկու ախոյեանները հրան դէմ-յանդիման, մէկն իբրև արդարութեան ջատագով, միւսն իբրև խաւարի ու բռնակալութեան մարմնացում։ Կռիւը անհաւասար է։ Մի կողմում փոքրաթիւ զօրք, միւս կողմում՝ զօրքերի ճնշող առաւելութիւն։ Սակայն թշնամու քանակական առաւելութիւնը սարսափելի չէր. առիւծ կտրեցին հէլլէնները, հարուածին հարուած հասցրին, տարան մի շարք փայլուն յաղթութիւններ։ Բաղդը սկզբներում ժպտում էր Յունաստանին, որպէսզի, աւա՜ղ, շուտով երես դարձներ նրանից. այսօր հեռագիրը յամառութեամբ միմիայն թիւրքական յաղթութիւնների մասին է գուժում։ Յունաստանի մայր հողը ողողուեց իր հարազատ զաւակների արիւնով. թշնամու զօրքերը մորեխի նման պատեցին երկրի մի մասը, գրաւեցին Թեսալիայի դաշտավայրը և բանակ հաստատեցին Լարիսայում։

Պատերազմ է իր բոլոր արհաւիրքներով. հրդեհը բոցավառւում է, սաստկանում, մարդիք կոտորւում են ճանճերի պէս։ Մարդիկ կոտորւում են . . . ցնծացէ՛ք բաշիբոզուկ դիպլօմատներ, ձեր փառաբանած համերաշխութեան արդիւնքն է սա։ Համաձայնութի՛ւն պոռացիք սկզբից մինչև վերջ, արևելեան ամբողջ ողբերգութեան ընթացքում, իսկ այնտեղ շարունակ հոսեց արդարների անմեղ արիւնը։ Համաձայնութի՛ւն պոռացիք, բայց երբէք չբռնեցիք անիրաւութեան ու բռնութեան ձեռքը, երբէք չխրատեցիք արիւնռուշտ մարդասպանին։ Եւ համաձայնութիւն հռչակելով, դուք մղեցիք Յունաստանին պատերազմական փոթորիկների դաշտը ու այդ ահռելի ոճիրով պսակեցիք ձեր արիւնալից սխրագործութիւնների եղերական շարքը։ Պարծեցէ՛ք ուրեմն ձեր ժողովրդասպան համաձայնութեան պտուղներով, պարծեցէ՛ք, որ այսօր թնդանօթների մահաշունչ որոտը դղրդեցնում է աշխարհը, որ հազարաւոր մարդ-արարածների կարմիր արիւնով շաղախւում են լեռներն ու ձորերը, պարծեցէ՛ք ձեր այդ գազանային յաղթանակներով։

„Յունաստանը յետ է նահանջում"—կայծակի արագութեամբ սլացաւ դէպի ամեն կողմ, խորին դառնութիւն ու կսկիծ պատեց բոլոր ազնիւ սրտերին։ Իսկ սևահմաբաւ թիւրքամոլների բանակում թնդաց դիւական քրքիջը... „Պապանձուեցէ՛ք լեզուներ, Թիւրքիան տակաւին կանգուն է, ուժեղ, կազմ ու պատրաստ"։

Այո՛, կարող էք հրճուել, դո՛ւք, սուլթանական բռնակալութեան ամեն կարգի երկրպագուներ։ Եւ ի՞նչպէս

չհրճւէք․ Եւրոպան իր խնամակալութեան տակ է առել Մեծ-Մարդասպանին, ձեր սիրեցեալ Սուլթան-Համիդին։ Նա կազմակերպում է և իր կատարելագործուած հրացաններով ու թնդանօթներով կռուի դաշտ է հանում տաճկական գնդերը։ Միւս կողմից նա ջանք է թափում անանցանելի խոչընդոտներ դնել փոքրիկ Յունաստանի առաջ, որը առանց այն էլ իր չնչին ուժերով պարտութիւն է կրում։ Տեսէ՛ք, Սալոնիկը, ուր Յունաստանը աւելի աջող պատերազմական գործողութիւններ կարող էր մղել, անմատչելի են դարձնում յունական նաւերին . . . Այո՛, քրքջացէ՛ք, սուլթանի խնկարկուներ, Եւրոպան այսօր բացարձակ դահճապետի դեր է ստանձնել մի փոքրիկ քրիստոնեայ ժողովրդի դիմաց, քրքջացէ՛ք․ սակայն . . . դեռ ամեն բան վերջացած չէ։

Ի՞նչ կը լինի վաղը—չենք կարող գուշակել։ Ո՞ւր է տանում մեզ դէպքերի ճակատագրական հոսանքը։ Արդեօք գոռոզ դիպլօմատիային պիտի՞ յաջողուի իր ամենակարող „համերաշխութեան“ շնորհիւ սահմանափակել պատերազմի թատրը։ Չենք հաւատում․ թո՛ղ տրաքւին դիւանագէտները, թո՛ղ կաշուից դուրս գան, այսուհետև այլևս ոչ մի պարզամիտին չեն կարող համոզել, որ նրանց ողբալի համերաշխութիւնը դրական արդիւնք կը տայ։

Երբէ՛ք։ Երեկւայ փաստերը պերճախօս վկաներ են։ Այդ համերաշխութիւնը չկարողացաւ խանգարել պատերազմի ժայթքումը, նա չպիտի կարողանայ և արգելք լինել նրա տարածման։

Մեն-մենակ է այսօր Յունաստանը։ Թշնամու անհամար գնդերի դէմ մեն-մենակ կռւում է նա յուսահատաբար և կոտորւում է։ Այո՛, բայց հերոսական, անվեհեր դիմադրութիւնից յետոյ, փառքով ու պատւով է կոտորւում. . . Կեցցէ՛ք դուք, հայրենիքի քաջարի զաւակներ, դուք ապացուցիք, որ ձեր քաջ պապերի արժանաւոր սերունդն էք, դուք ցոյց տուեցիք, որ գիտակցաբար կարող էք կռւել ու նահատակուել։ Եւ դուք կը պատերազմիք մինչև վերջին շունչը ու թող չէք տայ, որ ձեր դարաւոր ոսոխը իր պիղծ ներկայութեամբ անարգէ հելլէնների պանծալի հողը։ Եթէ յաղթուիք էլ, ձեր պարտութիւնը կը լինի յաղթութիւն. դուք կընկնէք պատերազմի դաշտում, իբրև մարմնացած զոհ դիպլօմատական նենգաւոր դաւերի, և կը խնկարկէ ձեզ մարդկութեան լաւագոյն մասը, սերնդէ-սերունդ, անէծք յղելով ժամանակակից բոլոր զօրաւորների նև յիշատակին . . .

Բայց մի՞թէ Յունաստանը մին-մինակ պիտի մնայ պատերազմի դաշտում։ Մի՞թէ այս կրիտիքական րոպէին Մակեդոնիան և այլ սուլթանահպատակ ըմբոստ ազգութիւնները ձեռք-ձեռքի չպիտի տան ընդհանուր ջանքերով տապալելու ասիական վայրենի բռնապետութիւնը, մի՞թէ նրանք կը շարունակեն լուռ հանդիսատես մնալ։

Իսկ Բալկանեան պետութիւնները։—Ահա նրանցից մինը խօսեց բարձր ձայնով, սպառնալիքներ ուղղեց սուլթանին։ Սակայն . . . յանկարծ լռեց. հիւսիսից շշնջաց նրան խորհրդաւոր ձայնը․ դա սպիտակ Ցարն էր, դա „Հայրիկն“ էր, որ պատւիրում էր Բօլգարիային հանգիստ նստել տեղը, մինչև որ իր հեղինակաւոր հրահանգները կը տայ։ Սերբիան ևս սպառնական նշաններ է ցոյց տալիս. ժողովուրդի մէջ յուզմունք է տիրում։ Խուլ, չարագուշակ ալեկոծութեան մէջ ծփում է ամբողջ Բալկանեան թերակղզին. հրաբուխը ժայթքելու վրայ է . . .

Հապա Եւրոպա՞ն—ահա մեծագոյն հարցը։ Անշուշտ կը շարունակեն „զօրութիւնից զուրկ զօրեղ պետութիւնները“ ըստ առաջնոյն հռչակել, որ համերաշխութիւնը կատարեալ է, կը շարունակեն և իրենց խաբել և իրար խաբել, իսկ երբ արևելքում կը ծաւալւի հրդեհը և աւելի ահեղ ու սպառնալից կերպարանք կառնէ, երբ սուլթանական մեծածաւալ պետութիւնը կը յայտնւի կործանման անդունդի ծայրին, այն ժամանակ համերաշխութիւն աղաղակող պառաւ Եւրոպան ինքզինքը կը նետէ արեան գոլորշիների մէջ... „Կեցցէ՛ եւրոպական անհամերաշխութիւնը“ զիլ ձայնով կը կանչէ դիպլօմատիան և կը յարձակւի իր լէշի վրայ․ կը փողփողին բազմերանգ դրօշակները սուլթանական դիակի շուրջը և . . . կը պայթի վերջապէս այն վիթխարի ընդհարումը, որին վաղուց ահ ու սարսուռով սպասում է քաղաքակիրթ աշխարհը, և որի առաջև մի մանկական խաղ պիտի լինի ներկայ պատերազմը։

ՆԱՄԱԿ ՊՈԼՍԻՑ

1/16 ապրիլ 97 Թ.

Կոտորածի այն դժոխային ծրագիրը, որ արիւնարբու Համիտը իր արբանեակներով գծած և կատարեալ յաջողութեամբ իրագործած էր, դեռ իր ամբողջ գործադրութիւնը գտած չէ։ Խայտառակ և անխիղճ Եւրոպան իր հռչակաւոր համաձայնութեամբ կարծես երդուել է բոլորովին խեղդել մոնկոլ բռնապետութեան տակ ճնշուած և հեծող ազգերու բողոքի և ազատութեան ձայնը, մէկ կողմէ իր հզօր աջակցութիւնը կը նուիրէ բռնաւորին՝ ազատութեան սիրով զօրացած բուռ մը կրետացիներու դէմ, և միւս կողմէն իր վատ և թոյլատու քաղաքականութեամբ ասպարէզ տուած է անոր՝ բոլորովին ոչնչացնելու հայ ժողովուրդը, որ իր իրաւունքի և պատւոյ պաշտպանութեան ոճիրը գործելու յանդգնութիւնը ունեցած է։ Նա շատ լաւ ըմբռնած էր՝ թէ ի՛նչ նշանակութիւն ունէին այն առերեւոյթ սպառնալիքները, որ համաձայն Եւրոպան ցուցաց իր գլխին հայկական կոտորածներու առթիւ. Նա համաձայն Եւրոպայէն աւելի լաւ գիտէ նաև այդ հա-

մաձայնութեան գաղտնիքը, որուն մինչև պարզիլը՝ առիթ չի փախցներ բոլորովին տկարացնելու և անհետացնելու հայը, որ իր կայսրութեան հիմերը խախտեց և կործանման վտանգեց. իսկ մինչև այդ գաղտնիքի բացարձակ պարզիլը՝ այդ անհամերաշխ համաձայնութիւնը անհամաձայնութեան փոխելու խորամանկութիւնը և ինքնավստահութիւնը ունի, և ցարդ եղած փորձեր ապացոյց մ'են՝ թէ նա յուսախաբ չի պիտի ըլլայ։

Հայ ժողովուրդը, բացի յեղափոխականներէ, կը հաւատար՝ թէ Հանօթոյի և միւս պետութիւններու արտաքին գործերու ներկայացուցիչներու սպառնալից յայտարարութենէն ետքը, որ ըրին օգոստոս 14-ի առթիւ տաճիկ կառավարութեան, այլևս վերջացած է կոտորածներու շրջանը. սակայն ապշեցաւ մնաց, երբ աչքին առջև տեսաւ Թոքատ և Կէմէրէկ արիւնաներկ դիակներով ծածկուած։ Այո՛, վերջին հարուածն էր խախտելու այն տկար հաւատքը, որ ունէին դեռ, կարգ մը անձինք Եւրոպայի և տաճիկ կառավարութեան արժանապատուութեան վրայ. այո՛, թուք և նախատինք է պատրիարքի և վարչութեան երեսին, որ տակաւին բեմի վրայէն և ընկերական շրջանակներու մէջ կայսերական բարեհնամ գթութիւնը կը դրատեն. այո՛, թէև տխուր և ցաւալի, սակայն վրէժխնդրութեան բոցը ևս աւելի կարծարծէ հայ յեղափոխական կուրծքերու տակ, որոնք միայն իրենց ուժերու վրայ ապաստան՝ կը քարոզեն միշտ չխաբիլ միամտաբար անամօթ և շահամոլ Եւրոպայի և լիրբ Համիտի ստապատիր խոստումներէն. այո՛, միանգամ ընդ միշտ կապացուցանէ՝ թէ հաշտութիւնն անկարելի է հային ու տաճիկ կառավարութեան մէջ և թէ ամեն հայ, աղքատ թէ հարուստ, աշխարհական՝ թէ կրօնաւոր, պարտաւորուած են կամայ թէ ակամայ ցմահ ոգորիլ ժողովրդի ազատութեան իրաւունքին պաշտպանութեան համար։

***

Այս օրերս ամեն մարդ Թոքատի կոտորածով զբաղած է։ Մանրամասնութիւններ կը ցուցնեն՝ թէ հոն ալ նոյն մէթոտը և նոյն անգթութիւնը գործադրուած է։ Տաճիկ խուժանը զինուած կացիններով, տապարներով և սուրերով յարձակած է անզէն ժողովրդեան վրայ, որ նախապէս գիտակ շատերը պահուտելու դգուշութիւնը ձեռք առած էին։ Հանդիպած հայը կը կոտորեն, քառսուն-Մանուկ եկեղեցին կը մտնեն, զարդերը կը կողոպտեն, սեղանը կը պղծեն և քահանան՝ Տէր-Յովհաննէսը, կսպաննեն հոն գտնուողներուն հետ։ Կոտորածը կը տևէ երկու ժամ՝, և այդ սուղ ժամանակին մէջ միայն քաղաքէն 130 հայ կսպաննին և 30 ալ կը վիրաւորին։ Ապա կսկսի աւարառութիւնը. 265 տուն և խանութ կը կողոպտուին։ Կուսակալը կը հասնի Սեբաստիայէն և խռովութիւններու վերջ կուտայ։ Կոտորածը կը տարածուի և գիւղերը, ուր սպանուածներու թիւը 3-400-ի կը հասնի։ Թոքատէն 4 ժամ հեռի Պէչէրի գիւղի քով գտնուող Ս. Յովհան-Ոսկերբերան վանքը կը կոխեն, կը թալանեն և Մանուէլ ու Մարտիրոս վարդապետները 15 ուրիշ հայերու հետ կսպաննեն։ Հոն կը հասնի վերջապէս Պոլսէն կազմուած արդարադատ յանձնաժողովը, որ կսկսի ցոյց կազմակերպողները և պարագլուխները բռնել և բանտարկել. յայտարարութիւններ կը ցրուէ, որպէսզի վնասուողները իրեն դիմեն, իրարու հետ սիրով վարուին, խանութները բանան, գիշերները դուրս չելնեն և այլն և այլն։ Տաճիկ խուժանը ապստամբական ցոյցեր կընէ, որպէսզի ձերբակալութիւններու շրջանակը չընդլայնի։ Տաճիկ յանձնաժողովին գործակից են նաև Սամսոնի Ռուսական և Սեբաստիոյ Ագլիական հիւպատոսները։ Հոն է նաև Սեբաստիոյ առաջնորդ Պետրոս եպիսկոպոսը։

Կոտորածի լուրը պատրիարքը խմացածին պէս անմիջապէս կառավարութեան կիմացնէ և կը խնդրէ, որ յանցաւորները պատժուին։ Դեսպանները հաւաքապէս սուլթանին կը դիմեն, որ այս անգամ՝ ազուէսային դէմքով, խոնարհ նայուածքով իր ցաւը և դժգոհութիւնը կը յայտնէ եղածին վրայ և անմիջապէս երկու մարդ կընտրէ իրողութիւնը քննել տալու համար։ Դեսպանները կը հակառակեն, սուլթանը կը համակերպի առնոց պահանջին, և ահա լիազօր յանձնաժողով մը կը կազմուի բարձրագոյն իրատէով. գայմագամ, ոստիկանապետ և ուրիշներ պաշտօնանկ կըլլան, թերևս անոր համար, որ լաւ կազմակերպած չէին գործը և ամբողջ Թոքատի հայ ազգաբնակութիւնը հրոյ և սրոյ ճարակ ընելու յաջողած չէին, հակառակ այնչափ փորձառութիւններուն։ Այսչափ միայն. ալ ի՞նչ կուզէք. պիտի երթան, պիտի քննեն, պիտի պատժեն, և այս գոհացում՝ մ'է պատրիարքին, որ սուլթան Համիտին խոնարհ երկրպագուն և կամաց-կամաց հլու գործիքը ըլլալու բաղդն ու երջանկութիւնը ունի։

Պատրիարքի յաջող քաղաքականութեան արդիւնքներէն մին է նաև 5 բանտարկեալներու արձակումը, որ ճարտարութեամբ յաջողեցաւ ձեռք բերել Թոքատի ահագին կոտորածի շնորհիւ։ Ասոնք ընդհանուր ներումի մեացածներէն մի մասն են, երկու մարզանցիներ, Աշըգեանի տէրրօրիստը, անոր ընկերը և ուրիշ մը։ Ուրիշներ դեռ կը մնան, սակայն անոնք ալ պիտի ազատուին անշուշտ, միայն ուրիշ կոտորածէ մը վերջը, թերևս Ռոտոսթոյի կոտորածէն։ Որովհետև անցեալ օրեր բաւականի չափ սոփայներ, համանման և համաչափ, կոտորածի անհրաժեշտ գործիքներ, գտնուած են տեղացի տաճիկներու քով, և թէ շրջակայ գիւղերու գաղթական ու տեղացի թիւրքերու խլրտումներն ու շարժումներն հիւպատոսներու կողմէ կանխաւ իմացուած և առջևը առնուած է, ակամայ անպատճառ։

Հետապնդումներու և ձերբակալութիւններու շրջանակը երթալով կը սեղմուի։ Կրետական խնդիրը տաճիկ-

ները կը յուզէ, զսպած ատելութիւնը բացարձակ կը ժայթքէ անոնց աչքերէն։

Տնտեսական տագնապը ծայրայեղութեան կը դիմէ, առուտուր չկայ, ապահովութիւն չկայ, վե՞րջը . . . Վերջը յեղափոխականը գիտէ . . .

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

—

23/7 փետրուար 97 թ.

Այս օրեր Տրապիզոնէն հասած ճանապարհորդներէ կը քաղենք հետևեալ տեղեկութիւնները։

Կրետական վերջին դէպքերը տեղւոյն թիւրք բնակչաց մէջ արդէն բաւական յուզում յառաջ բերած ըլլալով, այդ յուզումը աւելի կը սաստկանայ, երբ Պոլսէն կը հեռագրուի բէտիֆ զօրքերը հաւաքելու հրամանը. մեծ ջանքով կսկսին ժողվել բէտիֆները և քիչ ժամանակի մէջ կը յաջողին զինուորներու մեծ մասը զէնքի տակ դնել։ Դրամ ունեցողներէն շատերը փոխանորդ կը վարձեն 30-40 ոսկիի փոխարինութեամբ. առհասարակ շատ մեծ դժգոհութիւն ցոյց կուտան և սաստիկ կը վայրանան յոյներու դէմ, որոնք պատճառ կը նկատեն իրենց կրած բոլոր վնասներուն։ Խե՜ղճ, տըգէտ ժողովուրդ, որ չգիտնալով չարիքին միակ աղբիւրը, իր զգացած բոլոր զայրոյթն ու ոխը կուզէ անմեղներու վրայ թափել։

Ամե՛ն ժամանակ և ամե՛ն բանի մէջ, ամենէն աւելի ճնշուած ու հարստահարուած գիւղացին այժմ նոր զբրկանքի մ՚ալ կենթարկուի. անխիղճ կառավարութիւնը առանց ազգի խտրութեան իրենց ձեռքէն կառնէ իրենց ապրուստի միակ միջոցը եղող ձին և այն ալ ինչ մեծ անիրաւութեամբ, հազար ղուրուշ արժէք ունեցող ձիուն, չորս հարիւր ղուրուշ արժէք դնելով՝ տիրոջը կուտայ թղթի կտոր մը կառավարութենէն գանձելի, սակայն ե՞րբ, այդ միմիայն Ալլահը գիտէ և կամ մարգարէին փոխանորդ՝ դարուս ամենանշանաւոր զասապ Համիտը։ Երբ գիւղացին սաստիկ յուզելով կառավարութեան ըրած այս անիրաւութեան դէմ, սկսի բողոքել, պնդելով՝ թէ իր ձին հազար ղուրուշի գնած է և չը կրնար 400 ղուրուշի տալ, ո՞վ կը լսէ իր արդար բողոքը, իրեն կը պատասխանեն. „երբ ձին պատերազմէն ողջ վերադառնայ, դարձեալ 400 ղուրուշով քեզ կը ծախենք և այսպէսով զրկանք մ՚ալ չըլլար“։ Ի՜նչ հիանալի տրամաբանութիւն և սուլթանական արդարութիւն։

Տրապիզոնի մօտ Բլաթանացի հայ գիւղացիներուն ձիերն ալ նէր կը պահանջէ կառավարութիւնը. ի՜նչ սոսկալի անամօթութիւն, սպաննել, կողոպտել և ձիերն ալ նէր պահանջել։

Թիւրք աղքատ ընտանիքի մը երկու որդիները զինուորութեան կոչուելով, մնացեալներուն ապրուստին համար իրենց ձին կը յանձնեն բարեկամի մը, որպէսզի գործածելով՝ ստացած շահէն շաբաթէ-շաբաթ մաս մը տայ անոնց, որով միայն անօթութենէ կազատէին. բայց անագորոյն կառավարութիւնը առանց այլևայլութեան զայն ալ կը յափշտակէ։

Թող լսեն թիւրք յեղափոխականները և տեսնեն՝ թէ իրենց թիւրք եղբայրները ի՜նչպէս կը տառապին անգութ գազանի մը ճիրաններուն մէջ, թէև դեռ անոնց կրած բոլոր տառապանքները, մերիններուն քով դէ՛ինչ են։ Ցունական մենաստանի մը ջորիներն ալ ուզեցին, վանահայրը հատ մը նուիրելով ազատեցաւ առայժմ, բայց տեսնենք վերջը։

Այն գիշերը, երբ բէտիֆները ժողվելու հրամանը կը հեռագրուի, նոյն առաւօտը փողոցները թափուած կը գտնուին ահագին թուով թիւրք յեղափոխական թերթեր, „Միզան“, և յայտարարութիւններ արիւնագոյն թանաքով գրուած ու կնքուած։ Այս ամենը թէ՛ քաղաքը և թէ՛ գիւղերը այնքան ճարպիկութեամբ և այնքան մեծ քանակութեամբ կը ցրուին, որ բոլորին զարմանք կը պատճառէ։ Մինչև իսկ մզկիթներու մէջէն կը գտնուին և կարծես թէ բէտիֆները ժողվելու հրամանին կսպասէին։ Թիւրք յեղափոխականները իրենց այս բոլոր թերթերով ու յայտարարութիւններով թէև անմիջական արդիւնք չեն ունենար, այսինքն ժողովուրդը ուշքի գալով զինուորագրութիւնը մերժելու չափ քաջութիւն չունենար, սակայն բոլորովին ապարդիւն ալ չանցնիր, դժգոհութեան լուին բողոքներու աճելուն կը նպաստեն և տակաւին այդ թերթերուն անուններն իսկ չլսողներ զանոնք աչքոլլին կը տեսնեն, կը կարդան և անշշուկ իրաւունք կուտան գրածներուն։ Գիւղերու մէջ այդ թերթերու երևալուն առթիւ հետաքրքիր և ծիծաղաշարժ բաներ կը պատմուին. գիւղի մը մէջ 1-200 հոգւոյ չափ, քանի մ՚անգամ կը հաւաքուին մզկիթին բակը, կը խորհին՝ թէ ի՞նչ կը նշանակէ այս թերթերուն երևիլը և չկրնալով երբէք բացատրութիւն մը տալ ատոր, նախախնամութեան մատը կը նկատեն անոր մէջ և կըսեն՝ թէ Մոսկովը իրենց երկիրը պիտի գրաւէ, անոր համար Ալլահը կանխաւ այդ թղթերը թափել տուաւ, որպէսզի իրենց գիտցընէ գալիք պատուհասը. իսկ ուրիշներ կըսեն թէ այդ թղթերու մէջ տինամիթ կայ, որ անշուշտ մզկիթը օդը հանելու համար է և այս մտածումը այնքան կը սարսափեցնէ զիրենք, որ նոյն իսկ իրենց Բամազանի նուիրական օրերուն կստիպին մզկիթը գոցել, որպէսզի չլլայ թէ զիրենք ալ մզկիթին հետ օդը թռցնեն։ Կը պատմեն նաև՝ թէ գիւղացիներէն շատերը զինուած կը շրջին գիւղին մէջ, առանց գիտնալու՝ թէ ինչո՞ւ, և եթէ ազդեցիկ մէկը որ և է հրաման մը ընէր, պիտի գործադրէին առանց խորհելու՝ թէ ինչ կընեն, եթէ իրենց ըսէին՝ „ջարդեցէք քրիստոնեաները“, պիտի ջարդէին, և կամ նոյնիսկ հրամայէին թէ՝ „քանդեցէք կառավարութիւնը“ դարձեալ պիտի ընէին. տգե՜ղ ժողովուրդ, որ վտանգի ժամանակ ոչխարի նման մոլորելով, չկրնար երբէք կշռել իր ըրած գործին լաւ կամ վատ ըլլալը և միայն կուրօրէն կը հետևի իր առաջնորդներուն։ Թէ քաղաքը և թէ գիւղը մոլլաներէն ոմանք կը հասկնան թիւրք յեղափոխականաց միտքը և մի քանին մինչև իսկ առանց վախնալու մզկիթին մէջ կը խօսին ընդդէմ կառավարութեան և զեղծում գործող պաշտօնեաներուն։

ՆԱՄԱԿ ՇԱՊԻՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐԻՑ

2/14 ապրիլ 97 Թ.

Շապին-Գարահիսարի վիճակը շատ երկիւղալի է. կառավարական ձեւակերպութիւնները կուզեն կլլեցնել ժողովրդին՝ թէ ապահովութիւնը կատարեալ է. միւս կողմէ թիւրք խուժանի սպառնական ու զինեալ երեւոյթը մեզ ահուդողի մէջ կը պահէ: Քանի՛ մ'օր առաջ բացէիբաց կը պոռային՝ „այս անգամ յոյներն ալ մէկտեղ պիտի ջարդենք“:

Փետրուար 24-ին քրիստոնէից վրայ յարձակելու մտադիր էին, բայց անյայտ պատճառներով ետ կեցան: Այս թիւրք ժողովուրդը մազի չափ մտածում, տրամաբանութիւն չունի, ոչ երկրին պահանջը գիտէ, ոչ օգուտը, կոյր անսիրտ գործիք մ'է, մոլեռանդ սոփթաներու և մոլլաներու ձեռքը: Գ ա տ է ր կըսէ, ու առաջ կը վազէ . . .

Թոքաթի սարսափելի կոտորածի լուրին հետ հոս հասաւ նաև տեղւոյն միւթէսարիֆին պաշտօնանկութիւնը, և չարագործներու դատապարտութեան երկիւղը . . . ատոր վրայ տեղիս կատղած խուժանը հանդարտեցաւ քիչ մը. կառավարութիւնն ալ իր կողմէն մունետիկներ հանեց, յայտարարելով՝ թէ ժողովուրդները իրարու չվնասեն, հակառակ պարագային խստիւ պիտի պատժուին: Բայց հայ ժողովուրդին գլուխը այնքան քարին դպած է, որ կառավարութեան և անոր պաշտօնեաներուն փաղաքշիկ խօսքերուն վրայ հիւլէի չափ հաւատք չունի. մանաւանդ որ այստեղի կառավարիչը կարծես սուլթանի փորէն ելած է, իսկ մեր առաջնորդական տեղապահն ալ Աշըգեանի. քանի՛ մ'անգամ եղաւ միւթասէրիֆին թելադրութիւնով շնորհակալութեան ուղերձ կը մատուցանէ՝ թէ վալիին և թէ միւթասէրիֆին իրեն: Այս անգամ միւթասէրիֆն պաշտօնագիր (թագրիր) մը ստացաւ, որուն մէջ վստահութիւն կար, թէ այլևս ո և է դէպք չի պատահիր, և եթէ տեսնեն տաճիկներ, որ գրգռումի տեղի կուտան՝ իսկոյն իրեն իմացնեն եայլն: Գործին աւելի զաւեշտական կերպարան մը տալու համար, միւթասէրիֆը իր թագրիրին հետ բարեհաճած էր ղրկել նաև բարեմիտ առաջնորդին տալիք պատասխանն ալ, որուն մէջ կըսէր. „տեղս երբեք դէպք չէ պատահած, հայ ժողովուրդը շնորհիւ տեղիս կառավարութեան, հանգիստ կերպով իր գործերը կը շարունակէ, ժողովրդին մէջ երբեք թշնամանք կամ ատելութիւն չկայ եայլ եայլն“: Իսկ մտքով ու մարմնով մեր ծերունազարդ Ամբրոսիոսը անխղճօրէն կատարեց չարասիրտ կառավարիչին հրամանը . . .

Օրմանեանի սուլթանը գովաբանող կոնդակը կարդացւեցաւ, հաւատարմահրաւէր յորդորանքներով: Պաշտօնագրով մը առաջնորդին արտօնւեցաւ միշտ ներկայ գտնուիլ խտարէի ժողովին: Կայսերական հ ա յ ր ա խ ն ա մ ո ւ թ ի ւ ն ը ներողամտօրէն պիտի նայի հայոց ա պ ե ր ա խ տ ո ւ թ ե ա ն վրայ, պիտի լեցնէ եղեր զանոնք բարիքներով . . . մոռցնել տալ կուզէ իր գազանութիւնները . . . Եթէ հայ ազգը գլխէն մինչև մազին ծայրը, մինչև ոսկորներուն ծուծը լաւ ուսումնասիրած չըլլար իր թշնամին . . .

ԿԱՐԻՆ

Այստեղի համար տարածուած լուրը ջարդի մասին սուտ էր. սակայն ձերբակալուել են 1 հայ և մի քանի թիւրք զինւորականներ՝ իբր „Երիտասարդ Թիւրքիոյ“ պատկանողներ: Ասոնց մէկը կրթական տեսուչն է, որը առնաւուտ մըն է:

Դրանից յետոյ Սլայ-բէյը յանկարծակի խուզարկեց բանտը, ուր գտան յեղափոխական նամակներ, թերթեր (հայ և թիւրք), բրօշիւրներ և այլն. ձերբակալութիւնք վերսկսան: Բանտարկեալները կը գտնուին տանջարաններուն մէջ ու խիստ կը չարչարուին, որպէսզի „ճշմարտութիւնը“ խոստովանին: Իսկ ամբողջ ոստիկանութիւնը տենդոտ գործունէութեան մէջ է. լրտեսներու թիւը բազմապատկուած է. բոլոր „կասկածելի“ անձնաւորութիւնք խիստ հսկողութեան տակ առնուած են:

ԹԻՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՋԸ

Օր մը էշը, կապիկը, այծը եւ արջը կը մտածեն նուագածուական քառախումբ մը կազմել . . . ճիշդ այդ ծրագրով կազմուած է Եւրոպական համաձայնութիւնն ալ, որուն նպատակն է Եւրոպական վերջնական պատերազմին մինչեւ անհամաձայնութիւնը միշտ վար պահել:

Այդ վեց զաւշելիները եթէ պուտ մը մարդկային զգացում չունեցան, իրարու մէջ ալ պատուաճանաչութիւն չունին. գաղտնածածուկ կերպով կաշխատին՝ թէ ինչպէս կրնան իրար գլորել:

Թէեւ այդ տէրութիւնները իրենց երկիրներուն մէջ, քաղաքակիրթ ու բարոյական ազգեր կը հռչակեն զիրենք, բայց երբ իրենց հորիզոնէն դուրս կելլեն, անբարոյականութեան սկզբունքով կը շարժին: Կրետէն խաղաղցնելու պատրուակով 80 զրահաւոր ղրկեցին ու քաջաբար դէմ դրին . . . 000 ապստամբներու. եւ վերջապէս թող չտուին, որ այդ դարաւոր կղզեցիները իրենց ազատութիւնը ձեռք ձգեն: Իսկ այսօր, երբ Յունաստանը Թիւրքիոյ դէմ անհաւասար կռիւ կը մղէ հերոսաբար, այդ վեց լէշի ետեւէ վազող ագռաւները, հակառակ միջազգային եւ պատերազմական իրաւունքներու, Կրետէն դեռ պաշարած եւ Վոլոս զնդալետը փակած են զրահաւորներու վանդակի մը մէջ, որովհետեւ Կրետէի առջեւ խմբուած այդ չարաշուք համաձայնութիւնը, չարագուշակ նշաններ կամփոփէ իր մէջ:

Ինչ ալ ըլլայ կեղծ համաձայնութեան մը խաբուսիկ երեւոյթը, արեւելեան հարցին ամենէն հասուն ժամանակն է, կամ պէտք է քաղել կամ պէտք է ձգել որ որդնոտի:

Յունա-թրքական կռիւով կսկսի արեւելեան բազմաչարչար հարցին ահեղ ներկայացումը: Իրաւ է, տէրութիւնները խ ա ղ ա ղ ո ւ թ ե ա ն անունով կը գոռան, բայց կարելի է ըսել՝ „ո՛վ խաղաղութիւն, անունովդ ինչե՛ր կը սարքուին աշխարհս մութին մէջ“:

Տաճկաստան, համակերպելով գ ա տ է ր ի ն, պիտի գտնէ վերջապէս իր ճակատագրական ճակատագիրը: Յաղթութիւնը կամ պարտութիւնը իրեն համար երկսայրի դաշոյն մ'է:

Երբ Թեսալիոյ մէջ իրաց վիճակը վրդովիչ գոյն մը կառնէ եւ Պալքանի միւս պետութիւններն ալ կը տենչան Տաճկաստանի ճոխ կողոպուտին, անդին Գերմանիոյ, Աւստրիոյ կայսրերը, տակերնին նաֆթ քսածի պէս հեւիհեւ Պերլինէն Վիեննա, Վիեննաէն Բեթերպուրկ կը վազեն. անշուշտ որոշելու համար, թէ ի՞նչպէս կարող են խալիֆայի գոյութիւնը պահպանել, Թիւրքիոյ ամբողջութեան չխզուիլ եւ . . . այդ խառնակիչ պզտիկ ազգերուն դաս մը տալ . . .

Սուլթանը ինք քուն բախտն արթուն:

Եւ սակայն . . . պիտի ոչնչանայ:

*
* *

Պետութիւններ կան, ինչպէս մարդիկ, որոնք հազարումէկ ծիւնու փորձանքներէ յետոյ, դեռ խելքերնին գլուխնին չեն բերեր ու կարծես թէ անողոք ճակատագրականութիւն մը ոլոր քոլոր եւ ապառաժոտ ճամբաներէ դէպի անդունդ կառաջնորդէ զիրենք: Այսպէս են Սպանիա ու Թիւրքիա:

Այդ դժոխային երկիրները երբ պատմութեան անողոք կռուփներուն տակ ջարդուփշուր ըլլան, զազանութիւններու յիշատակ մը կը միայն ձգեն իրենցմէ:

Կար ժամանակ, ուր Օսմանեան կիսալուսինը աւելի կը լուսաւորէր հողագնդին վրայ, որքան չէր լուսաւորեր երկնից լիալուսինը: Կար ժամանակ մը, երբ ալլահի ստուերները կը փառաբանէին Հռոմի ս. Պետրոսի տաճարին խորանին վրայ իրենց ձիուն խոտ կերցնելու Եւրոպան ահուդողի մէջ կը պահեր: Որքա՜ն փոխուած են այդ հին բ ա ր ի օ ր ե ր ը, ամէն բան առաջ գնաց, միայն Թիւրքը իր տեղը քարի պէս զամուած մնաց, ու իր անշարժութեան մէջ հոգով մարմնով ապականեցաւ ու իր մթնոլորտին մէջ ապրող ժողովուրդներուն համար պատիժ ու պատուհաս եղաւ:

Եկած է ժամանակը, ուր այդ Թշուառ ժողովուրդները գիտակից իրենց կենսական ուժին եւ առաջդիմական միտումին կընդվզին հակամարդկային վարչութեան մը դէմ, ալլահի ստուերը ալ չը սարսափեցներ զիրենք եւ եթէ ժամանակով սարսափահար ակնածանքով մը կը յիշէին սուլթաններու անունը այսօր կը սիրեն շան անունը յիշել ու Համիտի անունը բերան չառնել:

Ջնջեցէք Թիւրքիան եւ վերակազմեցէք նոր Թիւրքիա մը, վարչական ամէն կատարելագործումներով:--Առաջին օրէն պիտի սկսի խոռոնկ շարժումը: Այդ ժողովուրդը այն ատեն առաջ կը քալէ, երբ հարկ է կործանել ու քարուքանդ ընել . . . կարծես Թրքաստանի չոր անապատներուն կարօտը կը քաշէ, ատոր համար երբ չի գտներ աւազ, մոխիրի վրայէ կը քալէ . . .

Անուղղայ երկիր է Թիւրքիան. որպէսզի իր բարբարոս ու մոլեռանդ բնազդները ուժաթափ ըլլան, պէտք է նախ հպատակեցնել քաղաքակիրթ ազգի մը լուծին տակ, կառավարել, առաջ կառավարուիլ սորվեցնել անոր. ապա թէ ոչ ճշմարիտ մարդասիրութեան վերջին խօսքը պիտի ըլլայ սա արդարավճիռը „պէտք է կործանել Թիւրքիան":

Բայց այդ ճշմարիտ մարդասիրական դարը դեռ շատ հեռու է. փառամոլ կիրքեր ու անձնական կեղտոտ շահեր կը զոհեն ամէն ազնիւ եւ պարկեշտ սկզբունք: Եթէ դրամատէրներու շահուն եւ կամ կայսրերու քմահաճոյքին համար վայրենական դրութիւնը նախընտրելի է, կը տապալեն առերեւոյթ քաղաքակրթութիւնն ալ, եւ ընկերային առաջադիմութեան առջեւ հրեշտակներու պատնէշ մը կը բարձրացնեն . . .

Եթէ Սուլթան-Համիտ գոյութիւն չունենար, պէտք էր հատ մը ստեղծել անկէ, դարավերջին մարդկութեան ատոր նկարագիրը ի վեր հանելու համար: Մեծ-Մարդասպանը իր գազանութիւններով ծառայութիւն մ'ըրաւ. քաղաքակրթութեան կեղծ դիմակը վար առաւ, եւ մեզի ցոյց տուաւ այդ դիմակին տակ կնճռած ու ահռելի դէմք մը, որուն իւրաքանչիւր փոթիկները մթին անցեալի մը արտայայտութիւնը ունին:

Սուլթանը մինակ ոչինչ ըրաւ. իրեն զօրավիգ ունէր ք ր ի ս տ ո ս ա զ օ ր վեհապետներ: Տեսանք թէ ինչպէս իմաստասէր երկրի մը կայսրը, չխանելով բացարձակօրէն պաշտպանեց այն մարդը, որ առաջին անգամ ըլլալով ընդհանուր մարդկութեան կողմէ Մ ե ծ - Մ ա ր դ ա ս պ ա ն տիտղոսին կարժանանայ: Երբ ընդունինք թէ հասարակութեան մէջ գռեհիկ տիպեր կան, ինչո՞ւ չընդունինք՝ թէ այդ գռեհկութիւնը ոսկեզօծ առաստաղներու տակ ալ կրնան առաջ գալ եւ աւելի նողկալի հանգամանքներով: Սա մխիթարական է, որ Կիյոմը Համիտի տեղը չէ եղած, եթէ պահ մը հաւատանք հոգեփոխութեան, պիտի համարձակինք ըսել, թէ այդ մարդը Լէնկթիմուրի հոգեփոխուածն է:

Թիւրքիան կը կործանի. արեւելեան հրաշէկ հարցը պիտի հալեցնէ այդ երկիրը, որ արիւնի եւ աւերակներու զանգուած մ'է: Կիյոմի մեֆիստոֆէլական ջանքերը ուրիշ նպատակ չունին՝ այլ տաճկաստանը իր հոգին չը փչած, անոր Թանկագին առարկաները իւրացնել. իր կնկանը կուրծքը, քիթը, բերանը զարդարելու համար: Ռուսիոյ կայսրը ու Փրանսիական նախարարութիւնները բաւական կըծուք հանեցին, սուլթաններու դիզած մեծափարթամ աւարներէն:

Մէկ բան մը մնաց: Համիտը չմեռած Եւրոպական թագուհիները Պոլիս երթալու եւ իրենց երախտագիտական տոչորող զգացումները անձամբ յայտնելու են Մեծ-խալիֆային. իրենց էրիկներուն . . . մէյմէկ պզտիկ խալիֆաներ հասցնելու համար.

Ինչպէս ամէն դար ունեցած է իր յատկանիշը, այս դարուն յատկանիշն եղած է վ ա տ ո ւ թ ի ւ ն ը:

Այն տէրութիւնները, որոնք Պերլինի դաշնագրով Թիւրքիոյ քրիստոնեաներուն պաշտպանութիւնը ստանձնած են, ոչ միայն չեն կատարեր իրենց խոստումը, այլեւ կը քաջալերեն Թշնամին, լրբութեան լրումն է ասիկա: Երբ Հայաստան արեան ջրհեղեղ կար, Սալզպէրի սառ սրտով մը կըսէր՝ „ի՞նչ ընենք, մեր նաւերը Տօրոսը չեն կրնար բարձրանալ": Իսկ երբ Կրետէն կը կոտորէին, Սօլզպէրին ի՞նչ կը մտածէր. անպատճառ կը ցանկար, որ իրենց նաւերը Իտայի վրա՞յ բարձրանային . . . Բայց ի՞նչ ըսես. լեզուն ոսկոր չունի, ուզած կողմդ կը դառնայ, մանաւանդ երբ այդ լեզուն Սօլզպէրի բերնին մէջ կը Թաւալի: Անգլիական նաւերը Կրետէն ռմբակոծեցին, Հայաստանն ալ այդպէս պիտի ընէին անշուշտ, աղէկ որ ներսերն են եղեր:

Եւրոպական դահլիճներն իրենց կատակերգութիւնը լաւ խաղցան:

Թոքաթի անակնկալ կոտորածը վերջապէս եկաւ եւ երեւան հանեց եւրոպական դիւանագիտութեան ահռելի դաւաճանութիւնը: Չես գիտեր՝ թէ այդ կայսր կոչուած ճիւաղները ի՞նչ շան ծնունդ են, որ այդքան անխղճօրէն կը վարեն անտէր ժողովուրդներու գոյութեան հետ: Թոքաթի մէջ 700 հոգի կոտորել տուաւ մոնկոլներու սուլթանը եւ Եւրոպան ձայն չի հաներ. բաւականացաւ քննութիւն մը բանալով: Սուլթանը իր արհեստին մէջ կնիկցուցած, վալին եւ մէկ քանի պաշտօնեաներ պաշտօնանկ ըրաւ, ցուցնելու համար՝ թէ հակառակ է կոտորածի: Ասիկա կոտորածի նոր մէթոդն է. կոտորել տալ ու յետոյ ցաւ յայտնելով, քանի մը հոգի ձերբակալել. ատկէց դիւրին բա՞ն կայ: Դեսպանները սպառնացեր են, որ եթէ կրկին կոտորած, պատահի, վալիներուն գլուխը պիտի պահանջեն: Թէեւ սուլթանը այդ սպառնալիքները շան տեղ ալ չի դներ:

Այս առաջին կամ տասներորդ անգամը չէ: Երբ մէկը անխռովաբար եւ կանխամտածութիւնով ոճիր մը գործած է, ինչո՞ւ մահուան չի դատապարտուի: Երբ չորս հայեր կախաղան բարձրացան սրբազան իրաւունք մը պաշտպանած ըլլալու համար, ի՞նչ իրաւունքով այդ վճիռը պիտի չգործադրուի անոնց նկատմամբ, որոնք ոճրագործութիւնը արհեստ ըրած են: Եւ մարդկային ո՞ր օրէնքով կը պահուի այնպիսի սուլթան մը, որ եթէ հասարակ անհատ մ'ըլլար մինչեւ հիմա 100 անգամ մահուան դատապարտուած կըլլար: Մի՞թէ գահի վրայ ըլլալը լիազօրութիւն կուտայ մարդուս հրէշ մ'ըլլալու եւ անպատիժ մնալու:

Հայութեան անձնուրաց զաւակներուն կը մնայ իրենց ազգին այս գերագոյն ճգնաժամին Թոյլ չտալ, որ մեր անհեթեթ թշնամին նոր դաւեր լարէ. չարժէ, հայ երիտասարդ, քու ահարկու այլ ազնիւ վրէժխնդրութենէդ աւելի կը սոսկայ Համիտը, քան Յունական բալիքարներէն: Տաճիկ կառավարութեան խելքը հասած է՝ թէ հայութեան ձեռքէն ճողոպրելիք չունի: Եթէ շատերուն համար անցած է հերոսութեան դարը, մեզի համար նոր կսկսի: Հրացանի մը ձայնը աւելի կը սարսեցնէ Համիտի գահը, քան եւրոպական տէրութիւններուն զոհինչները: Եթէ չպիտի ապրինք իբրեւ մարդ, պէտք է մեռնինք իբրեւ մարդ:

Սի՛րտ առ հայ ժողովուրդ,
Մեզ համար չէ գարնան գալը,
Մեզ համար չէ Քրիստոս յարեաւը,
Մեզ համար միայն սուրն ու զէնքը:

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴՐՈՅ ԱՌԹԻՒ

—

Մենք մինչեւ այժմ դեռ ոչ մի խօսք չենք ասել մի հարցի մասին, որ երկար ժամանակ խօսակցութեան առարկայ է

դարձել գլխաւորապէս արտասահմանեան հայերի մէջ։ Սպասում էինք, որ այդ հարցը պարզելի, „Դաշնակցութիւնը" իր վ ե ր ջ ն ա կ ա ն որոշումը կայացնի եւ ապա մենք ասէինք մեր վերջին խօսքը։ Այդ հարցը միութեան կամ համերաշխ գործունէութեան մասին եղած բանակցութիւններն են, որ սկսել էին „վերակազմեալ" Հնչակեան կուսակցութեան եւ Հ. Յ. Դաշնակցութեան մէջ։

Իւրաքանչիւր մի անհատ, որ քիչ-շատ տեղեկութիւն ունի յեղափոխական գործունէութեան մասին, գիտէ, թէ ինչ աստիճան զգուշութիւն եւ շրջահայեցութիւն է պահանջում ամեն մի քայլափոխում։ Արդ, հայ հասարակութիւնը, որ հետաքրքրւում է յեղափոխական կուսակցութիւնների միութեան կամ համերաշխ գործունէութեան խնդրով, պէտք է հասկանար խնդրի փափկութիւնը, ուստի եւ մեր „լռութեան" բնական պատճառները. պէտք է հասկանար, որ այս տեսակ դէպքերում բաւական չէ միայն արտայայտել պլատոնական ցանկութիւններ, այլ անհրաժեշտ է ուսումնասիրել այն մարմինը, որի հետ միասին ձեռք-ձեռքի տուած պէտք է տանել Հայրենիքի ազատութեան ծանր ու պատասխանատու աշխատանքը եւ գտնել գործնական, նպատակայարմար ճանապարհներ՝ միացնելու ի ս կ ա կ ա ն յեղափոխական ուժերը։

Կրկնում ենք, հասարակութիւնը պէտք է խորհուրդ տայ մեզ զգոյշ վերաբերմունք դէպի ամեն մի անհատ, որ ասպարէզի վրայ է յեղափոխական անուան տակ. պէտք է աջակցի մեզ՝ հեռացնելու այն խոչընդոտները, որոնք արգելք են հանդիսանում բուն գործիչ ուժերի համախմբման եւ ոչ թէ պահանջի մեզանից գեղեցիկ խօսքեր, հմայիչ խոստումներ, փքուն ճառեր, որոնք սազում են բեմախօսներին եւ ոչ կռուի դաշտում գտնուող զինուորներին։

Դժբաղդաբար այդպէս չէ։

Մեր լռութիւնը զանազան տեսակ մեկնութիւնների նիւթ է դարձել։—Բացի այդ, հասարակութեան մի մասը, որ հեռու է պահել իրեն յեղափոխական շարժման մէջ ջերմ մասնակցութիւն ունենալուց եւ որը այժմ եւս նեղութիւն չի կրում աւելի մօտենալու եւ գործի ընթացքի մասին քիչ թէ շատ ճիշտ գաղափար կազմելու, բնականաբար ամենապարզ հարցերը վճռում է ամենադիւրին կերպով եւ անտեղի դիտումներով զուր աղմուկ յարուցանում. միւս մասը իր դիւրահաւատութեան շնորհիւ կոյր գործիք է դառնում բախտախնդիրների ձեռքին եւ իր բարի, անկեղծ ցանկութիւնները ծառայեցնում պղտոր ջրերում ձուկ որսացողների գձուձ շահերին։

Յայտնելով հասարակութեան, որ „Դաշնակցութեան" պատասխանը Հնչակեան „վերակազմեալ" վարչութեան դեռ եւս վերջնականապէս չի ձեւակերպուած, մենք հասարակութեան անհամբեր ձայներին բաւականութիւն տալու համար՝ հետեւեալ անգամ կը պարզենք մեր ուշ պատասխանելու պատճառները։ Բայց մեր բռնած դիրքը լաւ պարզելու համար, մեզ անհրաժեշտ կը լինի խօսել "Հնչակեան Կուսակցութեան" մէջ ծագած բաժանումների փոխադարձ մերկացումների մասին. մի բան, որից մենք խոյս ենք տուել յամառաբար երկար ամիսների ընթացքում եւ որին մենք դիմում ենք մեր կամքին հակառակ, զգալով, թէ որքան դատապարտելի է ներկայ ճգնաժամում զբաղեցնել հայ հասարակութիւնը այդպիսի անախորժ հարցերով։

ՀԱՄԵՐԱՇԽ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ

Միացեալ Նահանգների Ֆօլ-Րիվըր քաղաքի Հնչակեան մասնաճիւղը և Դաշնակցական կոմիտէն կայացրել են իրենց մէջ համաձայնութիւն համերաշխ գործունէութեան համար։

Մեզ ուղարկուած է այդ երկու մարմինների խառը ժողովի արձանագրութիւնը, կնքուած և ստորագրուած երկու կողմից էլ։

Թողնելով համաձայնութեան այլ և այլ կէտերը, որոնք բոլորովին տեղական նշանակութիւն ունեն, հասարակութեան ուշադրութիւնն ենք դարձնում արձանագրութեան հետեւեալ կէտի վրայ։ Խառը ժողովի առաջին խնդիրը եղել է քննել թէ բանակցողներից իւրաքանչիւրն իրաւունք ունի արդեօք անկախօրէն բանակցութիւնները տանել։

„Դաշնակցականք թէ իրենց ծրագրի եւ թէ իրենց Ամերիկայի պատգ. ժողովի արձանագրութենէն վկայութիւն բերելով ապացուցին թէ իրաւունք ունին։--Իսկ Հնչակեանք անկարող լինելով ցուցնելու համար նման օրինակ մի որ եւ է պաշտօնական գրութիւն որոշուեցաւ, որ երկուստէք փոխադարձաբար ապահովագրեր փոխանակեն, որպէսզի մի որ եւ է ա ր տ ա ք ի ն մ ի ջ ա մ տ ո ւ թ ի ւ ն կ ա ր ո ղ չ ը լ լ ա յ խ ա խ տ ե լ երկու կողմանէ վաւերացուած եւ կնքուած վճիռները"։

Արձանագրելով համերաշխ գործունէութեան այս փորձը, յայտնում ենք, որ Ֆօլ-Րիվըրի մեր կոմիտէն, հետեւելով զանազան ժամանակներ զանազան տեղերում մեր միւս կոմիտէների արած քայլերին, վարուել է „Դաշնակցութեան" Ծրագրի ոգու համեմատ։

Աւելորդ չենք համարում յիշեցնել հայ հասարակութեան „Դրօշակի" առաջին տարուայ առաջին համարի (1891 թ. մայիս) մէջ լոյս տեսած յայտարարութիւնը՝ հաստատելու համար Ֆօլ-Րիվըրի, ինչպէս և մեր միւս կոմիտէների արած քայլերը։

„Վերեւ մենք բերինք համառօտ ձեւով այն զանազանութիւնը՝ գոյութիւն ունեցող օրգաններից, որ ստիպում է մեզ երեւան գալ մի նոր օրգանով. սակայն որչափ եւ զ ա ն ա զ ա ն ո ւ ե ն ք ուղղութեամբ նրանցից, այնուամենայնիւ մենք ուզում ենք նրանց հետ ընկերական յարաբերութեան մէջ լինել, որովհետեւ բոլորս էլ կռւում ենք մի ընդհանուր թշնամու դէմ"։

ՆՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Ռուսաստանի Կ. Բ. քաղ. ստացուած են.

Առաջին թերթից 63 ռուբլի 10 կոպէկ, № 1 ստորագրութիւնից 50 ր., Ս. 120 ր., № 2 ստորագրութիւնից 14 ր., Մեր խմբից Գ. Ե. 25 ր., Ց. Պ. 10 ր., Մարս 50 ր., Վ. Վ. 3 ր.

Վահագնի միջոցաւ Ռուսաստանի Խ. քաղ. Պերճէն 5 ռուբլի։

Ֆրանս. Ն. քաղաքից ստացուած են.

Տիգրիս 20 ֆր., Արգոս 10 ֆր., Արպեր 4 ֆր., Վարդապետ 5 ֆր., Տիգճէք 6 ֆր., Եփրատ 3 ֆր., Սարկաւագ 2 ֆր., Տրդատ 2 ֆր.

Նոյն տեղից Աշոտ 2 ֆր., Ակն 2 ֆր.

Նիւ-Եօրքէն՝ Յ. Ա-էն 1 դոլ.

Վիշապ քաղ. կեդ. կոմիտէի սնդուկի մէջ ստացուած են.

Սարգսեան 20 օսմ. ոսկի, Հուր 20 օսմ. ոսկի, Գ 100 ֆր., Կամաւոր 300 ղռան, Թռիչք 60 ղռ., Տար-

դանեան խմբի անդամ օր. Զոհ 20 ղր., Սեխ. Եղիա 20 ղր., Նոյնը 5 ղր., Արէս 20 ղր., Կախաղան 18 ղր., Գեղասար 10 ղր., Միւթիւն Կ. 15 ղր., Սէր խ. 10 ղր.

Նոյն տեղից ստացած են (15 յունիս-12 օգոստոս 96 թ.)։

Սար 200 օսմ. ոսկի, Մարկոս 200 օսմ. ոսկի, Խաչ. Գառ 100 օսմ. ոսկի, Յուսացողք 1000 ֆրանկ, Լամբա 20 օսմ. ոսկի, Կավրիէլ 20 օսմ. ոսկի, Թիւ մէկ 20 օսմ. ոսկի, Ախտէր 11 օսմ. ոսկի, Զիֆթ 5 օսմ. ոսկի, Անայիս 3 օսմ. ոսկի, Վարդապետ 154 դահեկան։

Բօլգ. Սիլիստր քաղաքից ստացած է.

Սլաք 20 ֆր., Մարտիրոս 20 ֆր., Ա. Մինասեան 10 ֆր., Հայրենասէր 10 ֆր., Լևոն Մ. Թօփսաքալեան 10 ֆր., Զաքար 10 լէվ, Թադեոր 6 լէվ, Օ. Ս. Փափազեան 6 լէվ, Ալէքսան Օ. Մէրտումեան 5 լէվ, Մկրտիչ Լալէեան 5 լէվ, Ռուբ 5 լէվ, Ս. Հաճի Գրիգորեան 5 լէվ, Գ. Ս. Զափուքճեան 2 լէվ։ Գրիգոր Սիմոնեան 2 լէվ, Յակոբ Յարութիւնեան 2 լէվ, Ոստանիկ 40 ֆր., Արժան 2 լէվ.

Տապար քաղաքի կեդ. սնդուկի մէջ ստացած են.

Սրանտեր գիւղից Տ. Նապլու 5 ղուրլի, Տ. Զանակ 1 ղ., Խ. Գ. 1 ղ., Հաճի-Պապ 45 կոպէկ, Կին մը 4 կոպ.

Զէխ գիւղից Տ. Պայծառ 1 ղ., Յ. Պ. 5 ղ., Ս. Զ. 11 ղ., Կ. Զ. 10 ղ., Ս. Զ. 2 ղ., Գ. Գ. 5 ղ., Խ. Ա. 5 ղ., Մ. Ա. 15 ղ., Յ. Ա. 5 ղ., Ծ. Ա. 10 ղ., Մ. Հ. 8 ղ., Տ. Աննա 1 ղ., Ս. Ք. Վ. 5 ղ., Կ. Ք. 1 ղ.,

Ապառաժ գիւղից Ա. Ս. 2 ղ., Գ. Ա. 5 ղ., Յ. Ա. 10 ղ.—Լեղիջուր գիւղից Յ. Տ. 15 ղ.

Վառնայի կոմիտէի արկղը մտած է թատերական ներկայացումէ մը զուտ հասոյթ 481 լէվ 20 ս.

Շոգեկառք 25 լէվ, Էվելինա 4 լէվ, Թամար 5 լէվ, Արագիլ 2 լէվ, Կիր 1 լէվ, Հայկակ Խ. 6 լէվ 25 ս., Եփրատ խ. 10 ևս 9 լէվ, Քաջունիք խ. 5 լէվ, Ալիս խ. 5 լէվ, Աշխէն խ. 8 լէվ 60 ս., Փայլածու խ. 4 լէվ, Աստղիկ խ. 8 լէվ 50 ս., Վերջալոյս խ. 5 լէվ, Խիզան խ. 6 լէվ, Ն. Ղ. 2 լէվ, Օր. Գոհար 1 ֆրանս. ոսկի։

Զոր խ. 14 լէվ, Գեղամ՝ խ. 8 լէվ, Կրակ խ. 4 լէվ, Օփան 10 լէվ, Մախթիկ 2 լէվ, Մարօ խ. 2 լէվ—Թռիչ խումբէն՝ Տ. Յ., Ա. Ա. 2-ական լէվ, Ա. Մ. 1 լէվ, Ա. Յ. Ա. 6 լէվ, Կ. Մ. Ս. 3 լէվ, Մ. Մ. 2 լէվ, Առիւծ Ծ. 3 լէվ, 1897-էն 10 լէվ 30 սանտ.

Շումլայի մասնաճիւղի միջոցաւ Հրացան խ. 23 լէվ 80 ս., Վարած խ. 9 լէվ, Ռուբ խ. 3 լէվ, Ուժանակ խ. 3 լէվ, Կայծ խ. 10 լէվ 85 ս., Ա. Բ. Զ. Գեղցիէն 7 լէվ 75 ս., Ք. 1 լէվ, Մասնաճիւղին անդամներէն 44 լէվ, Մասնաճիւղին Գանձանակէն 65 լէվ 55 ս.

Շումլայի Հայուհեաց Բարեգործ. Ընկերութենէն 25 լէվ։

Ի նպաստ Հարաւային-Ամերիկայ զրկուած դաշնակցականներու Ամերիկ. Լինի Դաշնակցական կոմիտէի ձեռամբ հանգանակուած է.

Ա. Մ. 9 դլ., Ղ. Ի. 6 դլ., Պ. Ս., Պ. Շ. 5-ական դլ., Կ. Կ. 4 դլ., Պ. Ա., Տ. Ս., Ս. Փ., Ս. Խ. 3-ական դլ., Մ. Ն., Յ. Ք., Յ. Հ., Լ. Բ., Գ. Ղ., Կ. Սֆ. Մ. Է., Ա. Ժ., Ա. Մ., Գ. Ղ., Յ. Պ., Յ. Պ., Հ. Մ. 2-ական դլ., Բ. Ս., Մ. Մ., Տ. Ա., Զ. Պ., Դ. Գ., Մ. Ս., Ա. Ք., Պ. Պ., Յ. Մ., Ա. Լ., Ա. Ա., Ն. Տ., Գ. Ա., Յ. Կ., Մ. Ս., Ս. Ա., Կ. Է., Վ. Կ., Գ. Պ., Բ. Կ., Ս. Ս., Ս. Ս., Ա. Մ., Խ. Ա., Գ. Ա., Պ. Պ., Ղ. Ս., Տ. Պ., Տ. Է., 1-ական դլ., Գ. Ի., Ա. Դ., Յ. Ա., Կ. Կ., Գ. Մ., Գ. Օ., Կ. Պ., Յ. Ա., Յ. Է. 50-ական սանտ., Յ. Ք., Տ. Յ., Ոճ, Շրջիք 25-ական սանտ.

Ռուսճուկի կոմիտէի սնդ. մէջ ստացած են.

Գաղտնապահ խ. 22 ֆր., Պանդուխտ խ. 28 ֆր., Նոր Աշխարհ խ. 25 ֆր., Արարատ խ. 15 ֆր., Մուրճ խ. 6 ֆր., Թիւ 4152-60-ից 13 ֆր., Արուսեակ Տ-ից 2 ֆր., Պ. Ե-ից 2 ֆր.

Պուրկազի կոմիտէի սնդ. մէջ ստացած են.

Կամաւորական խ. 16 լէվ, Կանանց խ. 58 լէվ 80 սանտ., Տարօնոյ խ. 61 լէվ 20 սանտ., Միւս ազգայիններէն 681 լէվ.

* * *

Փիլիպոպոլի հայ կանանց ձեռքով կազմուած Դաշնակցութեան Օժանդակ „Շաբէ" կոմիտէի յունուար ամսուայ մուտքը եղել 117ֆր. 80 ս.

Վասպուրականի կանանց և օրիորդներու խմբերու նուիրատուութիւնները.

Թենիայի խ. 75 դհ., Կրանպիլի խ. 23 դհ., Թօչէի խ. $71^1/_2$ դհ., Դոհարիկի խ. $31^1/_4$ դհ., Մայրպիլի խ. $53^1/_2$ դհ., Հայկունի խ. $68^1/_2$ դհ., Կարպիւզակի խ. 20 դհ., Նավուչէի խ. 19 դհ., Եւգինէի խ. 36 դհ., Անկախ խ. 38 դհ., Թենիի խ. 26 դհ., Սեթայի խ. 19 դհ., Սօնայի խ. 32 դհ., Քաջուհիի խ. 43 դհ., Վարսենիկի խ. 21 դհ., Զինարի խ. 14 դհ.

Ողջունում ենք հայ կանանց և օրիորդների ջերմ մասնակցութիւնը յեղափոխական գործին։

ԱԶԴ

Պոլիս՝ Խասգիւղ բնակող երկու պարսկահպատակ եղբայրներ՝ ԵՐԻՄՆԴ եւ ՎՈՒԱՄՇԱՊՈՒՀ ԹՈՒՂԼԱՃԵԱՆ, որոնք Օգոստոս 14-ին Խասգիւղի եկեղեցին խրկուած „Դաշնակցութեան" ատրճանակներէն երկու հատ Սմիթ-Վիսսըն իւրացուցած էին, մերժեցին վերադարձնել ատոնք Վառնայի կոմիտէին, լրբաբար առարկելով՝ թէ ազգին ապրանքն են ատոնք եւ ոչ ոք իրաւունք ունի ետ պահանջելու իրենցմէ։

Նոյն Նրւանդ Թուղլաճեանը այդ տագնապի միջոցին փախստականի մը համար „Դաշնակցութեան" կողմէն իրեն յանձնուած երկու օսմ. ոսկին եւս կոկորդն անցուցած է, մէկ մէճիտ միայն տալով պատկանեալ տեղը։ Այդ դրամն ալ կը մերժուի այժմ հատուցանելու, այն առարկութեամբ՝ թէ վերջին դէպքին հետեւանքով մեծամեծ վնասներ կրած են, թէեւ շուայտութեան համար դրամ չի պակսիր իրենց։

Այս ամենալիրբ արարքը հրապարակելով՝ կը հրաւիրենք հասարակութիւնը իր զգւանքով եւ արհամարհանքով հալածելու այդ երկուքը եւ ատոնց նմանները, որոնք չեն խորշար սեփականելու ժողովրդին՝ յանուն յեղափոխութեան իր արիւն-քրտինքով նուիրած լումաները։

* * *

Այս առթիւ հրաւէր կը կարդանք ամեն անոնց, որ „Դաշնակցութեան" պատկանած ռումբ, դաշոյն, ատրճանակ, գնդակներ կամ որեւէ իր վերջին դէպքին առթիւ իբենց քովն մնացած ունին կամ տեղ մը պահած են՝ փութան մանրամասնօրէ հաղորդել Խմբագրութեանս, որպէսզի պատշաճ դատուած եղանակով առնուին եւ յանձնուին „Դաշնակցութեան" տեղական կոմիտէներուն։

Խմբագրութեանս դիմել հետեւեալ հասցէով՝

Rédaction du Droschak, Genève (Suisse)